



*Համարը N 541-Ն  
Տիպը Որոշում  
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2007.05.30/27(551) Հոդ.664  
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն  
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ  
Վավերացնող մարմինը ՀՀ Նախագահ  
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 30.11.2007*

*Տեսակը Հիմնական  
Կարգավիճակը Գործում է  
Ընդունման վայրը Երևան  
Ընդունման ամսաթիվը 19.04.2007  
Ստորագրման ամսաթիվը 15.05.2007  
Վավերացման ամսաթիվը 16.05.2007  
Ուժը կորցնելու ամսաթիվը*

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*«Վավերացնում են»  
Հայաստանի Հանրապետության  
Նախագահ Ռ. Քոչարյան  
16 մայիսի 2007 թ.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

19 ապրիլի 2007 թվականի N 541-Ն

**ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Հաստատել դահուկուղիների շահագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշմամբ հաստատված կանոնակարգի դրույթները տարածվում են միայն դահուկուղիները շահագործող կազմակերպությունների վրա:
3. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին՝ վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել ճոպանուղու շահագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական կոմիտեի նախագահին՝ հաստատել դահուկուղիների ուղենշման կարգը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից 6 ամիս հետո:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ս. Սարգսյան**

2007 թ. մայիսի 15  
Երևան

**Տ Ե Խ Ն Ի Կ Ա Կ Ա Ն Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ**

Դահուկուղիների շահագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգով (այսուհետ՝ կանոնակարգ) կարգավորվում են դահուկուղիների անվտանգության ապահովման, դրանց ստեղծման, ուղենշման հարթեցման, պահպանման, հսկման, դրանց օգտագործման հետ կապված հարաբերությունները:

**I. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1. **Դահուկուղի՝** դրանց անվտանգության ապահովումն իրականացնողների կողմից ստեղծվող, ուղենշվող, հարթեցվող, պահպանվող, հսկվող՝ դահուկներով կամ սնուբորդով վայրէջք կատարելու համար նախատեսված մարզուղի:
2. **Վազքուղի՝** անվտանգության ապահովումն իրականացնողների կողմից, ուղենշվող, սակայն չհարթեցվող և չհսկվող դահուկով կամ սնուբորդով վայրէջք կատարելու համար նախատեսված մարզուղի:
3. **Ազատ դահուկուղի՝** դահուկորդների և սնուբորդիստների կողմից ստեղծված, չուղենշվող, չհարթեցվող, չպահպանվող և չհսկվող, դահուկով կամ սնուբորդով վայրէջք կատարելու համար նախատեսված մարզուղի:
4. **Դահուկորդ՝** սույն կանոնակարգով նախատեսված մարզուղիներում դահուկներով վայրէջք կատարող անձ:
5. **Սնուբորդիստ՝** սույն կանոնակարգով նախատեսված մարզուղիներում սնուբորդով վայրէջք կատարող անձ:
6. **Դահուկորդավազորդ՝** սույն կանոնակարգով նախատեսված մարզուղիների սահմաններից դուրս դահուկներով ազատ ոճի սահք իրականացնող անձ:
7. **Արգելափակում՝** վատ տեսանելիության, ձյան անդադար տեղումների, ձնահյուսների, ուժեղ քամիների, ինչպես նաև տեխնաձին, բնական այլ տարերքների առկայության դեպքում մարզուղիների, ճանապարհահանգույցների օտագործման արգելում:
8. **Դահուկուղիների ստեղծում՝** դահուկներով կամ սնուբորդով սահելու համար անհրաժեշտ դահուկուղիների նախագծում և կառուցում:
9. **Ուղենշում՝** անվտանգության ապահովման, մարզուղիների, դրանց բարդության աստիճանի տարբերակման նպատակով համայնապատկերային և ուղեցույց վահանակների կամ ազդանշանային ձողերի տեղադրում:
10. **Հարթեցում՝** համապատասխան տեխնիկայի կամ դահուկների և բահերի միջոցով մարզուղիների հարթեցում:
11. **Պահպանում և հսկում՝** դահուկով կամ սնուբորդով վայրէջք կատարելու համար՝ դահուկուղիների բնականոն վիճակի պահպանության և անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումների համալիր:
12. **Շահագործող կազմակերպություն՝** դահուկուղիների ստեղծման, ուղենշման, հարթեցման, պահպանման և հսկման գործառույթներ իրականացնող կազմակերպություն:

**II. ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ**

13. Դահուկներով և սնուբորդով սահելու համար շահագործող կազմակերպությունն իրականացնում է դահուկուղիների ստեղծում:
14. Դահուկուղիների նախագծման և ստեղծման ընթացքում հաշվի են առնվում՝
  - 1) տեղանքի երկրաբանական առանձնահատկությունները, դրա դիրքը, թեքությունը և այլն.
  - 2) տեղումների քանակությունը.
  - 3) քամու ազդեցությունը, դրա ուժգնությունը և ուղղությունը.
  - 4) ջերմաստիճանը և ճառագայթման աստիճանը, նոր տեղացած ձյան բյուրեղացումը, հողի հարթ մակերեսի փխրությունը գարնանը, ձյան, սառույցի հավվելու հավանականությունը, ձյան շերտերի ջերմաստիճանի տարբերությունը.
  - 5) ձնահյուսների առաջացման հավանականությունը:
15. Դահուկուղիները նախագծելիս և ստեղծելիս արգելակման և խուսանավելու համար անհրաժեշտ է նախատեսել համապատասխան տարածություններ:
16. Ազատ դահուկուղիներն ստեղծվում են դահուկորդների և սնուբորդիստների կողմից:

**III. ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ**

17. Դահուկուղիների բնականոն օգտագործման նպատակով շահագործող կազմակերպությունն իրականացնում է դահուկուղիների անվտանգության ապահովումը:

18. Դահուկուղիների անվտանգության ապահովման նպատակով դրանք շահագործող կազմակերպության կողմից համակարգվում են ըստ բարդության աստիճանի: Ըստ տարածքի բնական առանձնահատկությունների՝ դահուկուղիները բաժանվում են հեշտ, միջին բարդության և բարդ դահուկուղիների:

19. Ըստ բարդության աստիճանի՝ դահուկուղիներն ուղենշվում են կապույտ, կարմիր և սև գույներով՝

1) այն դահուկուղիները, որոնց լայնածիզ և երկարածիզ թեքությունը հորիզոնական հարթության նկատմամբ, բացառությամբ բաց տարածության փոքր հատվածների, չի գերազանցում 25 տոկոսը, համարվում են հեշտ դահուկուղիներ և ուղենշվում են կապույտ գույնով:

2) այն դահուկուղիները, որոնց լայնածիզ և երկարածիզ թեքությունը բացառությամբ բաց տարածության փոքր հատվածների, չի գերազանցում 40 տոկոսը, համարվում են միջին բարդության դահուկուղիներ և ուղենշվում են կարմիր գույնով:

3) այն դահուկուղիները, որոնց լայնածիզ և երկարածիզ թեքությունը գերազանցում է կարմիր դահուկուղիների համար նախատեսված առավելագույն չափը, համարվում են բարդ և ուղենշվում են սև գույնով:

20. Դահուկուղիների անվտանգության ապահովման, դրանց բարդության աստիճանի տարբերակման նպատակով շահագործող կազմակերպության կողմից ուղենշվում են համայնապատկերային և ուղեցույց վահանակների կամ ազդանշանային ձողերի տեղադրման միջոցով, որոնց վրա հստակ նշվում է տեղեկություն տվյալ մարզուղու կենտրոնական կամ եզրային ուղենշման մասին: Դրանցով սահմանված պահանջները պարտադիր են բոլորի համար:

Համայնապատկերային և ուղեցույց վահանակները չեն կարող օգտագործվել գովազդային նպատակներով:

21. Ուղենշումը կատարվում է այնպես, որ այն ցանկացած բնակլիմայական պայմանների դեպքում դահուկորդին կամ սնտուբորդիստին հնարավորություն ընձեռի տեղեկություն ստանալու դահուկուղու, դրա ուղենշման տեսակի, ինչպես նաև դրա բարդության աստիճանի մասին: Դահուկուղիները կարող են օգտագործել միայն ըստ դրանց ուղենշմամբ սահմանված՝ դրա տեսակին համապատասխան:

22. Դահուկուղիների ուղենշումը կատարվում է կենտրոնական և եզրային ուղենշման միջոցով:

23. Վազքուղիներն ուղենշվում են կենտրոնական ուղենշման եղանակով: Դրանք կարող են ուղենշվել նաև եզրային ուղենշման միջոցով: Վազքուղիներն ուղենշվում են դեղին գույնով:

24. Դահուկուղիների և վազքուղիների վտանգավոր հատվածներում՝ ճյուղավորումներում և խաչմերուկներում ուղենշումը կատարվում է հատկապես ճշգրիտ և դրվում են ուղեցույց վահանակներ, որոնք պետք է պարունակեն մեկ դահուկուղուց կամ վազքուղուց մյուսին անցնելու կարգը:

25. Ուղենիշերը վատ տեսանելիության դեպքում պետք է ներկվեն անդրադարձնող նարնջագույն ներկով կամ պետք է դրվեն լուսածորող ֆոնով լրացուցիչ ցուցանակներ:

26. Դահուկորդները և սնտուբորդիստները կարող են դահուկուղիներն ընտրել ըստ իրենց ցանկության և ունակությունների, իրենց երթևեկությունն իրականացնելով այնպես, որ չխոչընդոտեն և չվտանգեն այլ սահողների անվտանգությունը:

27. Դահուկուղիները մինչև դրանց շահագործմանը հանձնելը, ինչպես նաև ձևառատ տեղումներից հետո շահագործվող կազմակերպության կողմից ենթարկվում են հարթեցման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև վերանորոգման՝ տեխնիկական եղանակով: Դահուկներով կամ բահերով կարող են հարթեցվել դահուկուղիների փոքր հատվածներ, եթե դրանք անհնար է հարթեցնել տեխնիկական եղանակով:

Դահուկուղիները ենթարկվում են հարթեցման այնպես, որ վայրէջքների ընթացքում ապահովվի դահուկորդների և սնտուբորդիստների անվտանգությունը:

28. Վատ տեսանելիության, ձյան անդադար տեղումների, ձնահյուսների, ուժեղ քամիների, ինչպես նաև տեխնաձիմ, բնական այլ տարերքների առկայության դեպքում մարզուղիները, ճանապարհահանգույցները շահագործող կազմակերպության կողմից ենթակա են արգելափակման:

29. Սույն կանոնակարգով սահմանված դահուկուղիների օգտագործման պահանջները խախտող դահուկորդները, սնտուբորդիստները և այլ անձինք կարող են շահագործող կազմակերպության կողմից չթույլատրվել դուրս գալու մարզուղիներ:

#### IV. ԴԱՀՈՒԿՈՒՂԻՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

30. Դահուկուղիները պետք է օգտագործվեն դրանց տեսակին և նպատակային նշանակությամբ համապատասխան: Չի թույլատրվում այլ նպատակներով դահուկուղիների օգտագործումը:

31. Բոլոր դահուկուղիները և վազքուղիները նախատեսված են դահուկորդների և սնտուբորդիստների համար և կարող են օգտագործվել միայն նրանց կողմից: Չի թույլատրվում չմշկորդների, դահուկավազորդների, հետիոտների և այլ անձանց, ընտանի կենդանիների, ինչպես նաև ձյունագնաց մեքենաներով և սահնակներով մուտքը դահուկուղիներ և վազքուղիներ:

32. Դահուկորդները և սնտուբորդիստները դահուկուղիներն օգտագործելիս պետք է վազանց և արգելակում կատարեն՝ պահպանելով որոշակի հեռավորություն, իսկ մինչ վազանց կամ արգելակում կատարելն ուսումնասիրեն շրջակայքը, այլ դահուկորդների և սնտուբորդիստների հետ բախումը կանխելու նպատակով, չկատարեն անհարկի

արգելակումներ, վայր ընկնելիս արագ ազատեն դահուկուղին:

33. Դահուկուղիները սահողների կողմից կարող են օգտագործվել միայն դրանց տեսակի և նպատակային նշանակությանը շահագործող կազմակերպության կողմից ծանոթանալուց հետո:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Մ. Թովուզյան**